ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 23-ին, կիրակի օրը, Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սըրբազնագույն կաթողիկոսը և եպիսկոպոս ձեռնադրում երեք երիտասարդ և խոստումնալից վարդապետների՝ Տ. Գրիգորիս վրդ. Բունիաթյանին, Տ. Գարեգին վրդ. Ներսիսյանին և Տ. Անանիա ծ. վրդ. Արաբաջյանին՝ ի պայծառություն Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

Շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում կատարվում է նորընծաների «ընտրութիւն և ուխտադրութիւն՝ ըստ սովորութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ»: Իջման Ս. Սեղանի առաջ երեք Վարդապետները ուխտում են անխոտոր և անսայթաք ընթանալ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ուղղափառ վարդապետության շավղով և հավատարիմ լինել **«Սրբոյ Էջմիածնի միչև կվախճան կենաց իւրեանց, կալ մնալ հլու հպատակութեամբ ի ներքոյ իշխանութեան և հրամանաց Սրբոյ Կաթողիկէ Մայր Աթոռոյս, և ծառայել երկիրդի Տեառն, յօգուտ և ի փառս անսասան Սրբոյ Էջմիածնի»:**

Երդումնագրի ընթերցումից հետո նրանք ստորագրում են այն: Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը և Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պողոսյանը վկայում են ուխտադրությունը:

Կիրակի օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը, հայրապետական զգեստավորման մեջ, հանդիսավորությամբ իջնում է Մայր տաճար՝ իրեն առընթերակա եպիսկոպոսներ ունենալով Տ. Տիրայր արքեպ. Մարտիկյանին և Տ. Ավագ եպս. Ասատուրյանին:

Մայր տաճարում, Ս. Ստեփանոսի Սեղանի առաջ, Վեհափառ Հայրապետը բազմում է Աթոռի վրա և սկսում ձեռնադրության կարգը: Ամենայն Հայոց Հայրապետը աղոթքով և օրհնությամբ երեք վարդապետներին շնորհում է եպիսկոպոսական իշխանության յոթ աստիճանները:

Օրվա ձեռնադրության արարողության խարտավիլակի պաշտոնը կատարում է Տ. Արսեն եպս. Բերբերյանը, որը բարձր ձայնով հայտարարում է. «Շնորհապարդ Սուրբ Հայրապետ... զի միաբանք մեծի՝ Սրբոյ և Առաքելական Աթոռոյս Էջմիածնի, հանդերձ համօրէն և ուխտիւս, այսինքն, եպիսկոպոսունք, քահանայք, սարկաւագունք... այլ և իշխանք և աղքատք, խնդիր ունիմք և բարձրագահ Տէրութենէդ, վասն որոյ հայցեմք աղաչանօք, զի հրամայեսցես մեզ յանդիման լինել մեծանձնութեան քո ի բացայայտել զխնդիր մեր»:

Լսվում է Հայրապետի պատասխանը, «Հրամայեալ է ձեզ ի Տեառնէ ընդառաջ մատչել և ողջամիտ դիտաւորութեամբ բացայայտել Մեք զոր ինչ խնդրէքդ»:

Երիտասարդ վարդապետները, ավարտելուց հետո իրենց ծնրադիր աղոթքը Իջման Ս. Սեղանի առաջ, համընթաց մոտենում են Հայոց Հայրապետին և տալիս իրենց հավատի ուղղափառ խոստովանությունը: Հայրապետական աղոթքով և օրհնությամբ նրանց տրվում է եպիսկոպոսական աստիճանի համապատասխան զգեստ:

Այնուհետև ս. պատարագը շարունակվում է Ավագ Խորանի վրա: Ճաշոց գրքի ընթերցումից հետո շարունակվում է ձեռնադրության կարգը:

Մայր տաճարի դասերում տեղ են գրավել

Վեհափառ Հայրապետի քարոզը ձեռնադրության ավարտին

թեմերից եկած պաշտոնական ներկայացուցիչներ, ինչպես նաև նորապսակների ծնողները, հարազատներն ու բարեկամները:

Ձեռնադրության և օծման արարողություններին ներկա է նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Ձեռնադրիչ Հայոց Հայրապետը բալլում է Իր Աթոռի վրա՝ շրջապատված երեք նորապսակներով: Նորին Սրբությունն ընթերցում է ձեռնադրության մեծ աղոթքը: Նվիրյալները ձեռքները վեր բարձրացրած, ծնրադիր, դեմքները դարձնում են դեպի ժողովուրդը և հրապարակայնորեն հրաժարվում աշխարհից: Հանդիսավորությամբ հնչում է կոչման խորհրդաստ շարականը՝ «Աստուածային և երկնաւոր շնորհ, որ միշտ լնու կպէտս սրբոյ սպասաւորութեան Առաքելական Եկեղեցւոյ, կոչէ **զԳրիգորիս, զԳարեգին և զԱնանիա** վարդապետսն ի քահանայութենէ յեպիսկոպոսութիւն»:

Մարգարեական, ավետարանական, առաքելական ընթերցումներից, սաղմոսներից, շարականներից հետո ս. պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն», որից հետո Վեհափառ Հայրապետը սկսում է օծման սրբական կարգը: Հայ Եկեղեցու սրբալույս մեռոնով օծվում են նվիրյալներից յուրաքանչյուրի ճակատն ու ձեռքի բութ մատը: Այնուհետև համապատասխան աղոթքներով նորապսակներին տրվում են գավազան և մատանի՝ ի նշան եպիսկոպոսական իշխանության:

Վեհափառ Հայրապետը համբուրում է նորապսակ սրբականների ճակատները և, ներշընչված օրվա խորհրդով, խոսում հետևյալ բովանդակալից քարոզը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(25 հոկտեմբերի 1983 թ.)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Ես եկի ոչ պաշտօն առնուլ, այլ պաշտել» (Մատթ. Ի 28):

Սիրելի հավատացյալներ,

Ս. Ավետարանից վերցված խոսքերն են մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի: Նա իմաստալից մտքերի և առակների միջոցով հորդորներ և պատգամներ է տալիս իր աշակերտներին և մեզ բոլորիս: Այդպիսի մտքերից մեկն է այս խոսքը, որ վերաբերում է իր անձին: Մի քիչ լայն բացատրությամբ Հիսուս ասում է՝ ես եկա աշխարհ ոչ թե պաշտոն ստանձնելու, աթոռ գրավելու, այլ պաշտոն կատարելու, այսինքն՝ սպասավորելու, ծառայելու: Մեկ ուրիշ տեղ Ղուկաս ավետարանիչը հիշում է Հիսուսի գրեթե համիմաստ խոսքերը՝ «Ով ձեր մեջ մեծ է, թող փոքր լինի, և ով ձեր մեջ առաջնորդ է, նա թող լինի ձեր սպասավորը»: Ահա այս բարոյական մեծ սկզբունքով առաջնորդվեց ինքը Հիսուս իր ողջ կյանքում և մեզ թողեց ժառանգություն, որպեսզի մեր մարդկային տկար ուժերով փորձենք կյանքի կոչել այս սքանչելի պատվիրանը խոնարհության, համեստության, ծառայության, սպասավորության:

Քրիստոնեական վարդապետության հիմնական մտածումներից և հրահանգներից մեկը է այս՝ ուղղյալ մեզ բոլորիս, բոլոր քրիստոնյաներիս, և գործադրելի, իմ կարծիքով, կյանքի բոլոր բնագավառներում, բայց մանավանդ պարտադիր գործադրելի Եկեղեցու կյանքում, այսինքն՝ հոգևորականների կյանքում, լինեն նրանք քահանաներ, վանականներ թե եպիսկոպոսներ: Եվ ինչքան աստիճանը բարձրանա, այնքան պատասխանատվությունը ավելի կծանրանա տվյալ հոգևորականի վրա:

Այս մտածումը առաջնորդ ունենալով, ես կուզեմ այսօր, սիրելի հավատացյալներ, ձեզ ներկայացնել մեր երեք երիտասարդ եպիսկոպոսներին, որոնք վստահ եմ, նույն ոգով, նույն հոգեբանությամբ, նույն ուխտով ընտանձնեցին բարձրանալ եպիսկոպոսական աստիճանին, որ եկեղեցական տեսակետից բարձրագույն հոգևոր իշխանության աստիճանն է ներկայացնում: Ես վստահ եմ, որ մեր երեք նորապսակ եպիսկոպոսները այս գիտակցությամբ մոտեցան ինձ և իմ ձեռքով օծվեցին եպիսկոպոս: Եվ դուք բոլորդ եղաք վկաները այս սրբական ուխտի, այս սրբալան արարողության:

Անձնապես ես, իբրև Հայրապետ, շատ ուրախ եմ այս պահին, որը իմ կյանքի ամենաերջանիկ պահերից մեկն եմ նկատում: Եվ գուցե սխալ չի լինի, եթե ասեմ, որ մեր երեք վարդապետ միաբանների եպիսկոպոսական ձեռնադրությունը մեծագույն ընծան եղավ պարգևված ինձ, իմ կյանքի 75-ամյակի և իմ գահակալության 28-րդ տարեդարձի առիթով: Ճշմարիտ է իմ այս ուրախության, հրճվանքի ցգացումը:

Երբ Ս. Եկեղեցին ամեն անգամ նոր ձեռնադրություններով իր հոգևոր դասի շարքերը

լրացնում է նոր միաբաններով, ամեն այդպիսի առիթներով մեր Եկեղեցին ուրախանում է, մեր Եկեղեցին երիտասարդանում է: Եվ մենք, մեր հավատացյալ ժողովրդի հետ միասին, կգում ենք այդ երիտասարդացումը, այդ վերանորոգումը, պիտի ասեմ նույնիսկ՝ վերածնունդը, որովհետև ամեն մի նորաձև եպիսկոպոսով մանավանդ, ինչ-որ չափով՝ վերածնունդի և վերաշինության նոր սկիզբ է դրվում:

Հավասիկ մեր երեք նորապսակ սրբազան եպիսկոպոսները, առաջինը՝ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Բունիաթյան, երկրորդը՝ Տ. Գարեգին եպիսկոպոս Ներսիսյան, երրորդը՝ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյան: Առաջինը՝ Տ. Գրիգորիս եպիսկոպոս, Մենք օծեցինք նրան իբրև առաջնորդ Արգենտինայի հայոց թեմի վրա, այնտեղի ժողովրդի և պատկան իշխանությունների կրկնակի դիմումներով, երկրորդը՝ Տ. Գարեգին եպիսկոպոս, որին օծեցինք Արարատյան հայրապետական թեմի վրա, և երրորդը՝ Տ. Անանիա եպիսկոպոս՝ Ադրբեջանի հայոց թեմի վրա, նույնպես պատկան մարմինների միջնորդությամբ, Մեր հավանությամբ և Մեր վճռով:

Երեքն էլ, ես հաստատապես համոզված եմ, արժանավոր թեկնածուներ էին, թեև տարիքով գուցե տակավին փոքր՝ հպիվ երեսուն և հինգ տարեկանի մոտեցած, բայց իրենց պատրաստությամբ, իրենց բազմաթիվ տարիների փորձով և կենդանի գործունեությամբ թե՛ Մայր Աթոռում, թե՛ արտասահմանում և թե՛ մեր ներքին թեմերում, նրանք իրապես հանդիսացան պատրաստ այս շատ պատասխանատու պաշտոնը ստանձնելու: Երեքն էլ մեր հոգևոր ճեմարանի շրջանավարտներն են և լավագույն շրջանավարտներից: Երեքն էլ բարձրագույն ուսման հետևեցին արտասահմանում, երեքն էլ ավելի քան մեկ տարուց ի վեր պաշտոնավարում են իրենց թեմերում իբրև առաջնորդներ, և երեքն էլ բնիկ հայաստանցի են: Սա առաջին անգամն է իմ կաթողիկոսության շրջանում, որ ես օծում եմ երեք եպիսկոպոսների, որոնք երեքն էլ բնիկ հայաստանցի են: Սա ես նկատում եմ նույնպես նշանակալի և ուրախալի երևույթ: Եվ այս պարագան մեր երեք նորաասակ եպիսկոպոսներին պետք է դարձնի ավելի գիտակից և պատասխանատու, որովհետև, ավելի քան ուրիշները, նրանք ներկայացնում են հայաստանցի ժողովրդին:

Նրանք երեքն էլ ընդունեցին աստվածային շնորհները Մեր ձեռնադրությամբ և սրբալույս մեռոնի օծմամբ, և շուտով կվերադառնան իրենց թեմերը աշխատանքի:

Սիրելի սրբազաններ, այս բառին դեռևս վարժված չեք դուք երևի, բայց հաճելի է ինձ առաջին անգամ դիմել ձեզ «սրբազան» իմաստալից բառով: Դուք սրբազաններ եք հետայսու, հետևաբար ձեր կյանքի և գործունեության ճանապարհին պետք է հնարավոր չափով լինեք իսկապես սուրբ և մաքուր ամեն իմաստով՝ ձեր մտածումներով, ձեր ապրումներով, ձեր աշխատանքով, ձեր գործունեությամբ, ձեր ընկերային հարաբերությունների մեջ: Նաև հատկապես մաղթում եմ ձեզ երկնառաք ուժ և ներշնչանք, որպեսզի հավատարիմ մնաք ձեր ուխտին, հավատարիմ մնաք մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, հավատարիմ մնաք մեր ժողովրդին: Եվ երբ ժողովուրդ եմ ասում, հասկանում եմ համայն հայ ժողովուրդը ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի: Մնացեք նաև հավատարիմ հայոց երկրին, մեր վերածնված մայր հայրենիքին, որի հարազատ զավակներն եք դուք: Այս բոլոր սրբությունները մեկ համար, մեկ՝ հայ հոգևորականներիս համար, հանդիսանում են անբաժանելի ամբողջություն: Վստահ եմ, որ հետայսու դուք պիտի շարունակեք ձեր նվիրյալ աշխատանքը առավել պահանջկոտությամբ ձեր անձի նկատմամբ, առավել իմաստությամբ, առավել անձնվիրությամբ ծառայելու, սպասավորելու գիտակցությամբ, ինչպես պատվիրում է մեր Տերը Հիսուս Քրիստոս, որի խոսքերը իմ քարոզի սկզբին հիշեցի: Առաջնորդվեցեք Սուրբ Ավետարանի պատվիրաններով և մեր լուսաբնակ նախնյաց ցույց տված ճանապարհով:

Թող Աստված ձեզ միշտ պահի քաջառողջ հոգով և մարմնով, և միշտ արթուն ու անսասան, և երջանկացնի ձեզ ծառայության երկա՜ր, շատ երկա՜ր տարիներով:

Թող Աստված օրհնի ձեզ, ձեր կյանքը և ձեր վաստակը, ձեր ապագան այժմ և հավիտյան. ամեն:

Սուրբ պատարագից հետո Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարան:

Ժամը 15-ին, օրվա հանդիսությունների առիթով, Վեհարանի սեղանատանը տրվում է պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա են լինում նորապսակ սրբազանները, Մայր Աթոռի միաբանությունը, Արարատյան և Ադրբեջանի թեմերից ժամանած պատգամավորները:

Ընդունելությանը ներկա էր նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Անդրանիկ Հասրաթյանը:

Ընդունելության ժամանակ, եպիսկոպոսական ձեռնադրության առթիվ, առաջինը Վեհափառ Հայրապետին ուղղված շնորհակալական խոսք է ասում Տ. Սիոն արքեպ. Մա-

նուկյանը: Այնուհետև նորապսակ Տ. Գրիգորիս, Տ. Գարեգին և Տ. Անանիա եպիսկոպոսները հուսումով իրենց երախտագիտության և շնորհակալության խոսքն են ուղղում Վեհափառ Հայրապետին և խոստանում ավելի ու անձնվեր ծառայությամբ միշտ բարձր պահել հայ եկեղեցականի նվիրական կոչումը:

Տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը, Երևանի Ս. Զորավոր եկեղեցու խորհրդի նախագահ պրն. Տաճատ Վարդանյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Մեծի Տանն Կիլիկիո Աթոռի միաբան Տ. Անուշավան վրդ. Դանիելյանը ջերմորեն շնորհավորում են նորապսակ եպիսկոպոսներին:

Նորապսակ սրբազաններին շնորհավորում է նաև ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Վերջում օրհնության խոսք է ասում Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը մի անգամ ևս ջերմորեն շնորհավորում է նորապսակ եպիսկոպոսներին՝ շնորհելով նրանց եպիսկոպոսական պանակե, հույս հայտնում, որ նրանք միշտ կլինեն իրենց կոչման բարձրության վրա և իրենց անձնվեր ծառայությունը կբերեն ի պայծառություն Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի:

*
* *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը իր սրտագին շնորհավորանքներն է հղում Տ. Գրիգորիս, Տ. Գարեգին և Տ. Անանիա նորապսակ սրբազան եպիսկոպոսներին՝ մաղթելով նրանց մշտանորոգ եռանդ, արդյունաշատ գործունեություն և նորանոր հաջողություններ մեր հավատացյալ ժողովրդի եկեղեցական, ազգային-հայրենասիրական ծառայության նվիրական ճանապարհին՝ հուրախություն Ամենայն Հայոց Հայրապետի, ի պայծառություն Հայ Առաքելական Եկեղեցու և ի մխիթարություն մեր հավատացյալ ժողովրդի: